ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2023 թվականի դեկտեմբերի 22-ին

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 32. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներից բացի, պրոբացիայի ծառայողն իրավունք չունի դատարանում իրականացնելու ներկայացուցչություն, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի:

2. Պրոբացիայի ծառայողին արգելվում է մասնակցել «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում մասնակցության դեպքերի: